

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Ստուգաթերթ N 1

110ԿՎ և բարձր լարման էլեկտրատեղակայանքի՝ _____ ենթակայանի (ԵԿ)
և բաշխիչ սարքվածքի (ԲՍ) համար

_____ 201 թ.

_____ (տեսչության տարածքային մարմնի անվանումը)	_____ (հասցեն)	_____ (հեռախոսահամարը)
_____ (ստուգող անձի պաշտոնը)	_____ (ազգանունը, անունը, հայրանունը)	
_____ (ստուգող անձի պաշտոնը)	_____ (ազգանունը, անունը, հայրանունը)	
_____ (ստուգող անձի պաշտոնը)	_____ (ազգանունը, անունը, հայրանունը)	

Ստուգման սկիզբ (ամսաթիվ)՝ _____ ավարտ՝ _____

_____ (տնտեսավարող սուբյեկտի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)	_____ (ՀՎՀՀ-ն)
_____ (տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը)	_____ (հեռախոսահամարը)
_____ (էլեկտրատեղակայանքի գտնվելու (տեղաբաշխման) վայրը)	
_____ (էլեկտրատեղակայանքի ղեկավարի կամ վստահված անձի ազգանունը, անունը, հայրանունը)	_____ (հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագիր _____ ում կողմից _____ երբ է տրված

Ստուգման նպատակը/Ընդգրկված հարցերի համարներ

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Հարցաշար

հարց	Տեղեկատվական բնույթի հարցեր					գնահատման քանակ
	պատասխան բալեր					
	1	3	5	7	9	
ԵԿ-ի շահագործման տարին	Մինչև 5	5 և ավելի մինչև 10	10 և ավելի մինչև 15	15 և ավելի մինչև 20	20 և ավելի	(բալլ x 0.6)
Վերակառուցում,	Մինչև 3	3 և ավելի	5 և ավելի մինչև	10 և ավելի	15 և	(բալլ x

հիմնանորոգում (տարի)		մինչև 5	10	մինչև 15	ավելի	0.6)
Նախորդ ստուգումից հետո ընկած ժամանակահատվածում (բայց ոչ ավելի, քան 3 տարին) վթարայնության գնահատում	Տարեկան մինչև 3 հատ 1-ին աստիճանի խախտում	Տարեկան 4-ից 6 հատ 1-ին աստիճանի խախտում	Տարեկան 7-ից 10 հատ 1-ին աստիճանի խախտում	Մարդու կյանքին վնասի պատճառմամբ վթար, տարեկան մինչև 10 հատ 1-ին աստիճանի խախտում	Համակարգային, մարդու կյանքին վնասի պատճառ - մամբ վթար, տարեկան 11 և ավելի 1-ին աստիճանի խախտում	(բալլ x 1)
Տեղակայված պահուստային ուժային տրանսֆորմատորը	Առկա է՝ հանված է գործողությունից 1 օրով	Եղել է, ապահավաքակցված է և գտնվում է նորոգման մեջ՝ մինչև 3 ամիս ժամկետով	Եղել է, ապահավաքակցված է և գտնվում է նորոգման մեջ՝ մինչև 6 ամիս ժամկետով	Առկա է և չի գործում(վթարված է)	Բացակայում է	(բալլ x 0.6)
Գերլարումներից պաշտպանության սարքերը	Առկա են՝ գործուն վիճակում, մեկուսիչները մասնակի կոտրվածքներով	Առկա են՝ մասնակի գործուն վիճակում, վերջին մեկ տարում մինչև 3 անգամ գործելուց հրաժարում	Առկա են՝ մասնակի գործուն վիճակում, վերջին մեկ տարում 3-ից ավելի անգամ գործելուց հրաժարում	Առկա են և չեն գործում (վթարված են)	Բացակայում են	(բալլ x 1)
Ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի (ՌՊԱ) սարքվածքները	Առկա են՝ ըստ նախագծի բոլոր ՌՊԱ սարքվածքները, 1-ը ժամանակավոր, մինչև 3 Ժ, հանված է գործողությունից	Առկա ՌՊԱ սարքվածքներից 1-ը ժամանակավոր՝ մինչև 24 Ժ, հանված է գործողությունից	Առկա ՌՊԱ սարքվածքներից 2-ը ժամանակավոր՝ մինչև 24 Ժ, հանված են գործողությունից	Առկա է գործողությունից անժամկետ հանված ՌՊԱ 1 սարքվածք	Առկա և գործողությունից անժամկետ հանված են ՌՊԱ 1-ից ավելի սարքվածքներ	(բալլ x 1)
Ընդամենը						

Վերահսկողական բնույթի հարցեր								
NN ը/կ	հարցի անվանումը	ստուգման մասին նշումը (✓)		չի պահանջվում (✓)	հղում նորմատիվի հրավական ակտին	կշիռը	մեկնաբանություն	ստուգման մեթոդը
		այո	ոչ					
1.	Շահագործող կազմակերպությունում պահվող անհրաժեշտ փաստաթղթերը՝				1. Հավելվածի II գլխի 75-րդ կետ			

1.1.	շենքերի, շինությունների, տեխնոլոգիական հանգույցների և համալիրների սարքավորումների տեխնիկական անձնագրերն առկա են				- " -	4		1°
1.2.	առաջնային և երկրորդային էլեկտրական միացումների կատարողական աշխատանքային սխեմաներն առկա են				- " -	4		1°
1.3.	շինությունների անվտանգությունը, հրդեհային անվտանգությունը, շանթապաշտպանությունը և հակակոռուզիոն պաշտպանությունն ապահովող սարքվածքների փորձարկման սկզբնական ակտերն առկա են				- " -	4		1°
1.4.	հրդեհամարման օպերատիվ պլանն առկա է				- " -	4		1°
2.	Հերթապահ անձնակազմի մոտ օպերատիվ փաստաթղթերը՝ աղյուսակ N 1-ում* տրված ծավալով, առկա են				1.Հավելվածի II գլխի 87-րդ կետ	4		1°
3.	էլեկտրակայաններում, ենթակայաններում և էլեկտրական ցանցերը շահագործող կազմակերպություններում յուրաքանչյուր ԲՍ-ի և օդային գծի գերլարումներից պաշտպանության մասին հետևյալ տվյալները՝				1.Հավելվածի VIII գլխի 829-րդ կետ			
3.1.	ԲՍ-ի հողակցման սարքվածքների սխեմաներն առկա են				- " -	4		1°
3.2.	ԲՍ-ի սխեմաները՝ ՕԳ-ի մետաղաձուլմանով պաշտպանված մերձեցումների երկարություններով և հաղորդաձողավորման երկարությամբ դրանց համապատասխանող հեռավորություններով ԲՍ-ի պաշտպանության սարքերի և պաշտպանվող սարքավորման միջև, առկա են				- " -	4		1°
3.3.	ԲՍ-ի իմպուլսային ամրության (իմպուլսային փորձարկման և ծակման լարումների) անձնագրային				- " -	4		1°

	տվյալներն առկա են						
4.	Կարգագրով կատարվող աշխատանքներին ներկայացվող պահանջները պահպանվում են՝				3.Հավելվածի II գլխի 12-րդ բաժնի 3-րդ կետ		
4.1.	բարձր ռիսկայնության պայմաններում կատարվող աշխատանքներ				- " -	5	1°
4.2.	բարձր լարման էլեկտրակայանքների վրա միջին ռիսկայնության պայմաններում կատարվող աշխատանքներ				- " -	5	1°
4.3.	էլեկտրակայանքներում աշխատանքներ, երբ ներգրավվում են նույն կազմակերպության տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողներ				- " -	5	1°
4.4.	այլ կազմակերպության անձնակազմի կողմից գործատուի գործող էլեկտրակայանքներում կատարվող աշխատանքներ				- " -	5	1°
5.	Միայն կարգագրով, գրավոր կարգադրությամբ, ընթացիկ շահագործման կարգով կատարվող, կարգագրով՝ պարտադիր աշխատանքների պատասխանատու ղեկավարի նշանակմամբ, կատարվող աշխատանքների ցանկն առկա է				3.Հավելվածի II գլխի 12-րդ բաժնի 2-րդ կետ	5	1°
6.	Հողակցող սարքվածքների հսկման համար՝				1.Հավելվածի VIII գլխի 825-րդ կետ		
6.1.	հողակցող սարքվածքների դիմադրության չափումը և առնվազն 12 տարին մեկ ընտրանքային ստուգումը՝ գետնի բացումով, կատարվում են				- " -	5	1° 2°
6.2.	հողակցող տարրերի և հողակցիչի միջև շղթաների, բնական հողակցիչների և հողակցող սարքվածքների միացումների առկայության և վիճակի հսկումը՝ առնվազն 12 տարին մեկ, կատարվում է				- " -	5	1° 2°
7.	Հողակցման սարքվածքների դիմադրությունների չափումները, գետնի առավել ցամաքման				1.Հավելվածի VIII գլխի 826-րդ կետ	4	1°

	Ժամանակ, էլեկտրակայաններում, ենթակայաններում և էլեկտրահաղորդման գծերում, այդ սարքվածքների տեղակայումից, վերակառուցումից և հիմնական նորոգումից հետո, կատարվում են						
8.	Հողակցող սարքվածքների տեղակայումից, վերակառուցումից և հիմնական նորոգումից հետո, ոչ պակաս, քան 6 տարին մեկ, հպման լարումների չափումները կատարվում են				1.Հավելվածի VIII գլխի 827-րդ կետ	4	1°
9.	Աշխատանքի թույլտվությունն ըստ կարգադրության՝				3.Հավելվածի II գլխի 12-րդ բաժնի 22-րդ կետ		
9.1.	կարգագրերով և կարգադրություններով աշխատանքների հաշվառման մատյանում, ձևակերպվում է				- " -	4	1°
9.2.	օպերատիվ մատյանում՝ աշխատանքների թույլտվության մասին գրառմամբ, ձևակերպվում է				- " -	4	1°
10.	Կարգագրով կամ կարգադրությամբ աշխատանքների սկզբին նախորդող նպատակային հրահանգավորումն իրականացվում է				3.Հավելվածի II գլխի 12-րդ բաժնի 17-րդ կետ	5	1°
11.	Կարգագրով աշխատելիս նպատակային հրահանգավորումը, առաջնային թույլտվության նպատակային հրահանգավորման գրանցման մատյանում, ձևակերպվում է				3.Հավելվածի II գլխի 12-րդ բաժնի 20-րդ կետ	4	1°
12.	Կարգադրությամբ աշխատելիս նպատակային հրահանգավորումը, կարգագրերով և կարգադրություններով աշխատանքների հաշվառման մատյանում ձևակերպվում է				3.Հավելվածի II գլխի 12-րդ բաժնի 21-րդ կետ	4	1°
13.	Կարգագրով աշխատանքների իրականացման ժամանակ հսկողի կողմից հսկումը որևէ այլ աշխատանքի հետ համատեղելը բացառվում է				3.Հավելվածի II գլխի 12-րդ բաժնի 23-րդ կետ	4	1°

14.	Փորձարկումներ կատարող աշխատողների փորձարկումներ իրականացնելու իրավունքը, էլեկտրակայանքներում աշխատանքի նորմերի և կանոնների իմացության ստուգման վկայականի «Հատուկ աշխատանքներ կատարելու իրավունքի հավաստում» տողում գրառմամբ, հաստատված է				3.Հավելվածի II գլխի 19-րդ բաժնի 2-րդ կետ	4		1°
15.	Գործուղված անձնակազմից կարգազիր տալու, աշխատանքների ղեկավարի, աշխատանքներն իրագործողի և հսկողի իրավունք ունեցող անձինք, հրահանգավորումից հետո, մինչև ինքնուրույն աշխատանքի անցնելը, կազմակերպության համապատասխան մասնաճյուղի հանձնաժողովին, քննություն հանձնել են				3.Հավելվածի II գլխի 23-րդ բաժնի 11-րդ կետ	5		1°
16.	Էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների մասին հաղորդման կարգը պահպանված է				5.Հավելված N 2-ի 1-ին բաժնի 5-րդ կետ	4		1°
17.	Կազմակերպության կողմից, սահմանված դեպքերում, ԵԿ-ներում տեղի ունեցած պատահարների քննությունն իրականացվում է				5.Հավելված N 2-ի 2-րդ բաժնի 1-ին կետ	4		1°
18.	Տրանսֆորմատորների (ռեակտորների) կանխարգելիչ փորձարկումները կազմակերպվել են ըստ էլեկտրասարքավորման փորձարկման նորմերի (սարքերի տեխնիկական անձնագրերում նշված) և արտադրող կազմակերպության շահագործման հրահանգների				1.Հավելվածի VIII գլխի 685-րդ կետ	5		1°
19.	ԵԿ-ի հիմնական և օժանդակ սարքավորումների նորոգման հեռանկարային տարեկան և ամսական ժամանակացույցներն առկա են				1.Հավելվածի II գլխի 61-րդ կետ	5		1°

20.	ԵԿ-ում, կազմակերպության տեխնիկական ղեկավարի կողմից հաստատված, հրահանգների, կանոնադրությունների, տեխնոլոգիական, օպերատիվ սխեմաների ցանկն առկա է				1.Հավելվածի II գլխի 77-րդ կետ	4		2°
21.	Էլեկտրաէներգետիկական համակարգի էլեկտրական մասում վթարային պրոցեսների ինքնավար գրանցման համար նախատեսված սարքին (գործող) ինքնավար տատանագրիչներն առկա են				2.Հավելվածի V գլխի 25-րդ կետի 1-ին ենթակետ	4		2°
22.	Տրանսֆորմատորների հուսալի աշխատանքի պայմանները (հարաչափերի մեծություններն արտադրող կազմակերպության՝ տրանսֆորմատորների տեխնիկական անձնագրերում բերված նորմերի սահմաններում) պահպանված են				1.Հավելվածի VIII գլխի 659-րդ կետ	5		2°
23.	Մալուխուղիների և բաց ԲՍ-ի ու փակ ԲՍ-ի վերգետնյա վաքերն անբողջությամբ ծածկված են				1.Հավելվածի VIII գլխի 691-րդ կետ	4		2°
24.	ԲՍ-ի տարածքում յուղընդունիչները սարքին (գործուն) վիճակում են, յուղահավաքիչները սարքին (գործուն) վիճակում են				1.Հավելվածի VIII գլխի 692-րդ կետ	5		2°
25.	Էլեկտրակայանքներում աշխատանքի նորմերի և կանոնների վերաբերյալ գործուղված աշխատողների գիտելիքների ստուգման մասին սահմանված ձևի վկայականները՝ գործուղող կազմակերպության հանձնաժողովի կողմից շնորհված խմբի նշումով՝ առկա են				3.Հավելվածի II գլխի 23-րդ բաժնի 2-րդ կետ	4		2°
26.	Կուտակիչ կայանքն սպասարկող անձնակազմն ապահովված է՝							
26.1.	մարտկոցի առանձին տարրերի լարման, էլեկտրոլիտի խտության և ջերմաստիճանի հսկման սարքերով				1.Հավելվածի VIII գլխի 731-րդ կետի 1-ին ենթակետ	3		2°
26.2.	հատուկ զգեստով և հատուկ գույքով՝ համաձայն				1.Հավելվածի VIII գլխի 731-րդ կետի 2-	3		2°

	շահագործող կազմակերպության հրահանգի			րդ ենթակետ			
27.	Բաց ԲՍ(ԲԲՍ)-ի և ԵԿ-ի տարածքները ցանկապատված են արտաքին ցանկապատով՝ 1.6 մ բարձրությամբ			4.Հավելվածի III գլխի 10-րդ բաժնի 58-րդ կետ	4		2°
28.	Էլեկտրակայանքների սրահների, խցերի, վահանակների, հավաքվածքների դռները փակված են փականով			3.Հավելվածի II գլխի 10-րդ բաժնի 18-րդ կետ	5		2°
29.	Նորոգման լուսավորության ձեռքի շարժական լուսատուների սնման ցանցը սարքին է			1.Հավելվածի VIII գլխի 849-րդ կետ	4		2°
30.	Փակ ԲՍ (ՓԲՍ)-ի խցիկների դռների և ներքին պատերի, ԲԲՍ-ի սարքավորման, լրակազմ ԲՍ (ԼԲՍ)-ի արտաքին և ներքին դիմային մասերի, հավաքվածքների, ինչպես նաև վահանների դիմային և հակառակ կողմերի վրա մակագրություններն առկա են՝			1.Հավելվածի VIII գլխի 699-րդ կետ	3		2°
30.1.	կազմակերպության ստանդարտի համաձայն, ԲՍ-ի դռների վրա նախազգուշական նշաններն առկա են			- " -	3		2°
30.2.	ապահովիչների վահանակների վրա և (կամ) միացությունների ապահովիչների մոտ հալուն ներդիրների անվանական հոսանքները նշված են			- " -	3		2°
30.3.	սարքավորման իրանի մետաղական մասերի վրա ֆազերի գունավորումը նշված է			- " -	3		2°
31.	Էլեկտրակայանների, կաթսայատների և ենթակայանների հիմնական և օժանդակ սարքավորումների վրա այդ սարքավորումների անվանական տվյալներով ամ- րացված ցուցանակներն առկա են			1.Հավելվածի II գլխի 78-րդ կետ	3		2°
32.	Աշխատանքային և վթարային լուսավորությունը՝			1.Հավելվածի VIII գլխի 848-րդ կետ			
32.1.	բնականոն ռեժիմում սնվում են տարբեր անկախ սնման աղբյուրներից			- " -	3		2°

32.2.	էլեկտրակայաններում, ենթակայաններում և կարգավարական կետերում սնման աղբյուրների անջատման դեպքում, վթարային լուսավորությունն ավտոմատ կերպով հոսանքափոխվում է կուտակիչ մարտկոցի կամ սնման այլ անկախ աղբյուրի վրա				- " -	3		2°
33.	ԲԲՍ-ի հոսանքատար մասերից վերև և ներքև լուսավորության, կապի և ազդանշանային գծերի համատեղ անցկացումն իրականացված չէ				4.Հավելվածի III գլխի 11-րդ բաժնի 81-րդ կետ	4		2°
34.	Օդի և յուղի հարկադիր առությամբ տրանսֆորմատորների և ռեակտորների (ՂՑ), ջրի և յուղի հարկադիր առությամբ տրանսֆորմատորների (Ց) հովացման սարքվածքները գործում են				1.Հավելվածի VIII գլխի 666-րդ կետ	5		1° 2°
35.	Օդի հարկադիր և յուղի բնական առությամբ տրանսֆորմատորների (Ղ) հովացման սարքվածքները գործում են				1.Հավելվածի VIII գլխի 667-րդ կետ	5		1° 2°
36.	Ռելեական պաշտպանության և էլեկտրաավտոմատիկայի (ՌՊԷԱ) սարքվածքները մշտապես աշխատանքի մեջ են				1.Հավելվածի VIII գլխի 794-րդ կետ	5		1° 2°
37.	Բոլոր դասերի լարումների գերլարումների սարքին (գործուն) սահմանափակիչները և փականային պարպիչները մշտապես միացված են				1.Հավելվածի VIII գլխի 832-րդ կետ	5		1° 2°
38.	ԲՍ-երը սարքավորված են գործուն վիճակում գտնվող օպերատիվ ուղեկապերով				4.Հավելվածի III գլխի 42-րդ կետ	5		1° 2°
39.	էլեկտրակայանքների բանալիների պահպանման և հաշվառման կարգը պահպանվում է				3.Հավելվածի II գլխի 10-րդ բաժնի 19-րդ կետ	4		1° 2°
40.	Ամպրոպային գերլարումներից ԲՍ-ի և ԵԿ-ի պաշտպանություններն առկա են				4.Հավելվածի III գլխի 16-րդ բաժնի 151-րդ կետ	5		1° 2°
41.	Ռեսուրսներն սպառած կամ էներգահամակարգի հարաչափերին չհամապատասխանող սարքավորումները				1. Հավելվածի II գլխի 59-րդ կետ	5		1° 2°

վերականգնված, փոխարինված կամ արդիականացված են							
---	--	--	--	--	--	--	--

Տվյալ ստուգաթերթը կազմվել է հետևյալ նորմատիվ փաստաթղթերի հիման վրա՝

1. ՀՀ կառավարության 27.12.2007 թ.՝ «Էլեկտրակայանների և ցանցերի շահագործման վերաբերյալ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1605-Ն որոշում.
2. ՀՀ կառավարության 21.12.2006 թ.՝ «Էլեկտրատեղակայանքների սարքվածքին ներկայացվող ընդհանուր պահանջներ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1943-Ն որոշում.
3. ՀՀ կառավարության 23.11.2006 թ.՝ «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1933-Ն որոշում.
4. ՀՀ կառավարության 04.09.2008 թ.՝ «Էլեկտրական բաշխիչ սարքերին և ենթակայանների սարքվածքին ներկայացվող պահանջներ» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1033-Ն որոշում.
5. ՀՀ կառավարության 12.04.2007 թ.՝ «Էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների դասակարգումը, դրանց մասնագիտական քննության կարգը հաստատելու մասին» N 580-Ն որոշում:

Ստուգման մեթոդների պայմանական նշանակումներն են՝

1° - փաստաթղթային

2° - ակնադիտական

Աղյուսակ N 1*

Հերթապահ անձնակազմը	Փաստաթղթի անվանումը						
	Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր	Օպերատիվ կատարողական սխեմա (սխեմամակետ)	Օպերատիվ մատյան	Կարգավարի կառավարման և վարման տակ զտնվող սարքավորումներն աշխատանքից հանելու հայտերի մատյան կամ քարտարան	Ռելեական պաշտպանության, ավտոմատիկայի և հեռուստամեխանիկայի մատյան	Ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի նախադրվածքների քարտեր	Կարգադրու-թյունների մատյան
Էլեկտրակայանի հերթափոխի պետ	Օպերատիվ կատարողական սխեմա (սխեմամակետ)	Օպերատիվ մատյան	Կարգավարի վարման տակ զտնվող սարքավորումներն աշխատանքից հանելու համար կարգավարին տրվող հայտերի մատյան	Կարգավարի վարման տակ չզտնվող սարքավորումներն աշխատանքից հանելու համար գլխավոր ճարտարագետին տրվող հայտերի մատյան	Կարգադրու-թյունների մատյան		

			կամ քարտարան				
Էլեկտրաարտադրամասի հերթափոխի պետ	Օպերատիվ կատարողական սխեմա (սխեմամակետ)	Օպերատիվ մատյան	Ռելեական պաշտպանություն, ավտոմատիկայի և հեռուստամեխանիկայի մատյան	Ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի նախադրվածքների քարտեր	Կարգադրությունների մատյան	Կարգագրերով և կարգադրություններով աշխատանքի հաշվառման մատյան	Սարքավորումների թերությունների և անսարքությունների մատյան կամ քարտարան
Ջերմային արտադրամասերի պետեր	Հիմնական խողովակաշարերի օպերատիվ սխեմա	Օպերատիվ մատյան	Կարգադրությունների մատյան	Կարգագրերով և կարգադրություններով աշխատանքի հաշվառման մատյան	Սարքավորումների թերությունների և անսարքությունների մատյան կամ քարտարան		
Ջերմային ավտոմատիկայի արտադրամասի հերթափոխի պետ	Օպերատիվ մատյան	Տեխնոլոգիական պաշտպանությունների և ավտոմատիկայի մատյան և ԿԱՀ-ի տեխնիկական միջոցների մատյան	Տեխնոլոգիական պաշտպանությունների և ազդանշանման նախադրվածքների քարտ և ինքնակարգավորիչների առաջադրանքների քարտեր	Կարգադրությունների մատյան	Կարգագրերով և կարգադրություններով աշխատանքի հաշվառման մատյան	Սարքավորումների թերությունների և անսարքությունների մատյան կամ քարտարան	
Քիմիական արտադրամասի հերթափոխի պետ	Քիմջրամաքումն օպերատիվ կատարողական սխեմա	Օպերատիվ մատյան	Կարգադրությունների մատյան	Կարգագրերով և կարգադրություններով աշխատանքի հաշվառման մատյան	Սարքավորումների թերությունների և անսարքությունների մատյան կամ քարտարան		
Էլեկտրացանցի կարգավար	Օրվա օպերատիվ կատարողական սխեմա (սխեմամակետ)	Օպերատիվ մատյան	Էներգահամակարգի կառավարման և վարման տակ գտնվող	Ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի և հեռուստամեխանիկայի մատյան	Ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի նախադրվածքների քարտեր	Կարգադրությունների մատյան	

			սարքավորումներն աշխատանքից հանելու հայտերի մատյան կամ քարտարան				
Մշտական հերթապահության բնթակայանի կարգավար, տեղամասային ցանցի կարգավար	Օրվա օպերատիվ կատարողական սխեմա (սխեմամակետ)	Օպերատիվ մատյան	Սարքավորումներն աշխատանքից հանելու հայտերի մատյան	Ռելեական պաշտպանության, ավտոմատիկայի և հեռուստամեխանիկայի մատյան	Ռելեական պաշտպանության և ավտոմատիկայի նախադրվածքների քարտեր	Կարգադրությունների մատյան	Սարքավորումների թերությունների և անսարքությունների մատյան
Հերթապահ անձնակազմը	Փաստաթղթի անվանումը						
Ջերմացանցի կարգավար	Խողովակաշարերի օպերատիվ կատարողական սխեմա	Օպերատիվ մատյան	Սարքավորումներն աշխատանքից հանելու հայտերի մատյան	Ցանցերի աշխատանքի ջերմատիճանային և պիեզոգալիական ժամանակացույցներ	Կարգադրությունների մատյան	Սարքավորումների թերությունների և անսարքությունների մատյան	
Ջերմային ցանցի հերթապահ ճարտարագետ	Օրվա օպերատիվ կատարողական սխեմա	Օպերատիվ մատյան	Սարքավորումներն աշխատանքից հանելու հայտերի մատյան			Սարքավորումների թերությունների և անսարքությունների մատյան	Կարգադրող և կարգադրությունների աշխատանքի հաշվառման մատյան

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար**

Դ. Սարգսյան